թեան, թէ սինդիկատի միջոցով—այդ կատարելապէս մի և նոյն է։

Գլխաւոր հարցը ինչումն է։ Պարզապէս հետևեալում։ Սինդիկատները, որոնց նպատակն է պաշտպանել պրօֆեսիօնալ շահերը, ստեղծված 1884 թ. օրէնքով, մի այնպիսի ժամանակ, երբ դեռ ևս չէին ուզում ընդունել միութեան (association) կատարեալ ազատութիւնը, օժտված են մի քանի ոչ այնքան խոշոր նշանակութիւն ունեցող արտօնութիւններով, որոնցից զուրկ են 1901 թ. օրէնքով թոյլատրված միութիւնները։ Իրերի դրութիւնն այսպէս լինելով՝ հարցը չէ՞ր լուծվի, եթէ ջնջվէին միութիւնների և սինդիկատների միջև գտնվող տարբերութիւնները, եթէ ֆրանսիական բոլոր քաղաքացիներին շնորհվէին մի և նոյն իրաւունքները, եթէ փոխանակ կիսակատար և անհաւասար ազատութիւնների, շնորհվէր ընդհանուր ազատութիւն։

Բայց ինչու համար, պիտի ասէք, պաշտօնեաների որոշ մասը սինդիկատ անունից շատ են սիրում։ Ահա այստեղ է բարդանում հարցը։ Ընդունում եմ որ մի քանի պաշտօնեաներ երազում են սինդիկատի դրօշակի տակ ինչ որ երևակայական ա-

[illegible]

Սրովհետև 1873 թ. տնտեսական կրիզիսի շնորհիւ Բուքօվինայի առևտուրը շատ ընկաւ, հայերը սկսեցին այնտեղից գաղթել ուրիշ երկիրներ և հետզհետէ նուազեց նրանց թիւը։

| Թւականին | Լուսաւորչ. | Կաթօլիկ | Միասին |
|---|---|---|---|
| 1869 | 828 | 882 | 1710 |
| 1880 | 686 | 756 | 1442 |
| 1890 | 546 | 747 | 1293 |
| 1900 | 381 | 439 | 820 |

Ահա և գիտնական Պօլեկի պատմական ուսումնասիրութեան էութիւնը, որ մեզ համար լուսաբանում է հայկական գաղթականական հաստատներից մէկի՝ Բուքօվինայի հայ գաղութի ծագումը, նրա զարգացումը և ներկայ դրութիւնը։ Հայ բանասէրի և պատմաբանի ձեռքի տակ դա պատմական մի թանգագին աղբիւր է, հայոց պատմութեան լուսաբանութեան համար։ Իր աշխատութեան վերջում Պօլեկը կցել է նաև մի քանի պաշտօնական գրութիւնների պատճէնը, լատիներէն և գերմաներէն լեզուներով։

Լ. Բաբայեան

Թ Է Հ Ր Ա Ն

